ղերսէր թէ Ծառա՛յք իմ, զմայրիկն իմ ինձ բաշխեցէք։ Եւ սոքա ի խեղճ եկեալ և յամօթի հարեալ թէ Քեզ մայրն քո բաշխած լիցի և զայլն ի մեզ տո՛ւր կենդանի։ Եւ թագաւորն ասացեալ թէ Երբ տամ զնոսա ձեզ, սպանեա՞լ եղեր կամ կենդանի. և ի նմին ժամու զղափու աղասին և զըզլար աղասին խեղդամահ արարեալ և կու իջուցանեն ի պալատի պարսպէն ի վայր ի մէջ զօրացն։ Եւ տեսեալ զնոսա ասեն թէ Նոքա չեն սոքա, թագաւո՛ր, այլ նման են նոցա։ Եւ թագաւորն բազում երդմամբ հաւատարմացուցանելով զծառայսն թէ Նոքա են։ Եւ ի յոտս նոցա կապեցին պարան և քարշեալ բերին զերկոսեանն յընթացս ասպարիսին, որ կոչիւր Աթմէյտան և կախեալ զնոսա[1]) ի ծառ մի, որ կոչի չինար աղաճի՝ ի յոտիցն ի վար գլխիվայր. և յորժամ կախեցին՝ յայնժամ զսատակեալ գարշելի մարմինսն անդամ անդամ և յօշ յօշ կտրատեալ զօրքն ամենայն և պատառ պատառ առեալ՝ գնացին իւրաքանչիւր տեղիս, զի մնաց միայն լոկ ոսկերք ջլացն և ողոշարն և գլուխն երևիւր ի կախաղանին. ոչ ձեռք և ոչ թեք, ոչ փոր և ոչ միս թանձր, այլ միայն նշմարանք ոսկերցն, որպէս զՂարա Աբտուլային, քանզի էին գէրս և փափուկս. այժմ ահին զառհաւատչեայսն։ Եւ ի ժամուն յայնմ որ զայսոսիկ ետ թագաւորն, ևս և հրաման ետ Զուռնազանին ի լուր ռամկին թէ Զդրսի փախած մարդիկն գտէք դուք և սպանէք և ես զներսն սրբեմ. դա ձեզ վէզիր լիցի և էնկիչէր աղասի՝ Մէհէմէտ աղա Կօսկաֆուրունլի։ Ըսկիզբ աղմուկիս և մայր այս եղև թէ Վէզիր լինիմ, և այսչափ բան յառաջ գնաց և ահա այժմ եղև վէզիր։ Եւ գնացեալ ամբոխն հանգեան յայնմ տեղի որ ասի Էթմէյտանի։

1) զնա.